գումարոյն՝ մնայ՝ 3775 19 3/4

Ծանօթութիւն 1) Յայսմ գումարոյ 2783 ռուբ. 65 կոպ. տուեալ են ի դին 3000 ռուբլւոյ արժողութեան երեք հատ բանկովիչ մի մի հաղարանոց բիլեթաց առաջին փոխառութեան։

2) Գոն այլ ևս դպրոցապատկան ապառիկ մեծ և փոքր գումարք դրամոց, ի նախանցեալ ժամանակաց մնացեալք ի վերայ զանազան անձանց. ուստի Հոգաբարձութիւնս հոգ տանի ստանալ և զայնոսիկ։

Անդամք Հոգաբարձութեան

Սիմէօն Պահ. Տ. Խորայէլեանց
Յովհաննէս Պահ. Մախսուդեանց
Գրիգոր Լուլեանց
Օհանջիայ Աղամալեանց
Յակոբ Մելիք-Շահնազարեան
Աբրահամ Ս. Հասանջալալեանց։

ՏՈՒՏԱԿ

Թոռոյ ռոռոցլաց, աշակերտաց, վերակացուաց Հոգևոր Դպրոցին Հայոց Պարապուղաց, նաև Հրէայապրեալ, փոխադրեալ և ռոռոնուսարդ աշակերտացն.

Կոչեալ է 18 Յունվարի 1871 թվին

Հոգևոր Դպրոցն Հայոց Պարապուղաց որ ընդ նախակրթարանին են ըստ դասատանց։

Թիւ Ուսուցչաց	9
,, Աշակերտաց	182
,, Վերակացուաց	1
,, Պարգևատրեալ աշակերտաց .	79

Թիւ փոխադրեալ դասատանէ ի դասատուն աշակերտացն

Յ1-ն	Յ2-ն	Յ3-ն
36	25	13

Ուսումնասիրտ աշակերտք են 9

Ծանօթութիւն։ Ուսանելի առարկայքն են՝ 11. այն է՝ Կրօն, Հայերէն, Ռուսերէն և Գաղղիերէն լեզուք, պատմութիւն Հայոց, աշխարհագրութիւն Հայաստանի, Թուաբանութիւն, Ընդհանուր աշխարհագրութիւն և պատմութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն։

Անդամք Հոգաբարձութեան

Սիմէօն Պահ. Տ. Խորայէլեանց
Յովհաննէս Պահ. Մախսուդեանց
Օհանջիայ Աղամալեանց
Գրիգոր Լուլեանց
Յակոբ Մելիք-Շահնազարեան
Աբրահամ Ս. Հասանջալալեանց։

ԲԱԳՈՒ

Խմբագրութեան Երրորդ Եռամսեայ

Տարակոյս չկայ, որ մեր պատուական Հայրենակիցներն լսած կլինին այն հիւանդութեան (խոլերայի) լուրն, որ կեղրոնացաւ այս տարի Յուլիս ամսոյ 28 ից։ Ուստի ահա առաքելով Խմբագրութեանդ այս երկտող բանի հետ մի բանաստեղծութիւն "Խոլերայ" վերնագրով, յուսով եմ, որ կը բարեհաճէք զետեղելու նորան Ձեր պատուական "Արարատ" ամսագրի թերթերում։

Եթէ ճշմարտութիւնը մի լուսավառ ճրագ է, որ չէ կարելի թագցնել ոչ մի ծածկոյթի տակ, ուրեմն, ես չեմ կարող չյիշել և չխոստովանել այն իրողութիւններն, որոնք մեզ ժամանակներս լոյս տեսան այստեղ։

Այն ահռելի հիւանդութեան ժամանակ, մեր Բագուայ Հայկական ժողովրդեան մէջ հանդիսացաւ մի վեհանձնական Հոգի, որն տեսնելով իրա փոքր հօտի սրտաբեկութիւնն և թափառականութիւնն այս և այն ծածկոցների տակ, արիացած Քրիստոնէական սուրբ հաւատով, թռչում էր տանից ի տուն քաջալերում սուրբ գրքերի բացագրութիւններով, որ այս ախտը ոչ մի բանով չէ դուրս գնալ, եթէ ոչ՝ աղօթիւք, պահօք և ողորմութեամբ։

Նա ոչ միայն Աստուածային սրբազան վկայութիւններովն էր խրախուսում և քաջալերում ժողովրդեան, այլ մինչև անգամ իրա սեփհականութիւնից ևս օգնում էր դեղոյայքով անտէր և անօգնական Հայկական անդամներին, որոնք

անկողնի մէջ ընկած հառաչում էին. իսկ վախճանածներին փառքով և պատուով հասցնում էր ի հող գերեզմանի ինքնին անձամբ, նախընթաց լինելով յուղարկաւորաց այն ժամանակ, երբ մարդ չէր կարողանում իւր կարեաց համար տանից դուրս գալ և եղբայր եղբօրից հեռանում էր երկիւղից, բայց յիշեալ Հայրիկին իբրև քաջ զինաւոր Հայկական սուրբ եկեղեցւոյ մի խումբ երիտասարդ իւր յետնից պատրաստած, հասնում էր օգնում էր ամենեցուն առհասարակ, որերն կարօտում էին որ և իցէ օժանդակութեան։

Քանիցս անգամ է արտասուալի աչքերով քարոզել ժողովրդեան նոյն իսկ բեմի վրայից այս մահտարաժամ հիւանդութեան մասին։ Քանիցս անգամ խրախուսելով ժողովրդեան "լաւ է յուսալ ի Տէր, քան յուսալ ի բժիշկս" դուրս է եկել ի թափոր, ուր ի ծունկս անկեալ աղօթել է ի Տէր, որ նա կրկին ընդունի Բագուայ տխրասիրտ ժողովրդին իրա քաղցր խնամատարութեան ներքոյ, թողլով նոցա մեղքերը։

Այսպիսի գործունէութիւնքն աչքի առաջ ունենալով, մի՞թէ պիտի զլանայ մեր Բագուայ Հայկական ժողովուրդը թողնելու նորա այս սխրագործութիւնքն առանց մտադրութեան։ Ամենևին ոչ։ Սակայն ես յուսով եմ, որ գոնէ մի օր կմտաբերեն Բագուայ Հայերը այս առաքինի գործքերը և կպատրաստուին խորին շնորհակալութիւն մատուցանելու մեր իմաստուն արժ. Հօր—Թադէոս աւագ Քահանայի Բուդաղեանց. ցանկալով և բարեմաղթելով նորան այսպէս աղնիւ գործքերով շատ տարիներ մեր ազգի և Նորա սուրբ եկեղեցւոյ լուսաւորութեան և պարծանաց համար։

Ինչպէս լսեցի մի քանի պարոններից, նոյն արժ. Հայրը կիւրակէ օրը (Սեպ. 5ին) շնորհակալութեան հանդէս պիտի կատարի Աստուծոյ, որ նա կրկին սիրով ընդունեց Բագուայ ժողովրդին Իրա բաղուկների և խնամատարութեան տակ, անհետացնելով միանգամայն նորանից (ժողովրդից) տկարութեան ահ ելի և քստմնելի նշաններն։

Ուրբաթ Ա՝ուրբաթիկան Ընկերութեան
Ա-ոգ Գրիգորեանց

1871 -դ. Սեպտեմբեր։
Ի Բաքու։

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ ՀԱՑՈՑ ԱԽԱԼՑԽՈՑ։

(Ամսագրոյս թերթից անձկութեան պատճառաւ՝ ինչպէս այլ նամականիքը նոյնպէս հետևեալը չկարողանալով պարունակել անցեալ (Դ) թուոյն մէջ՝ ի ներկայիս կը հրատարակեմք հանդերձ երկոքումբք ճառօք)։

Խրիատրո-Ընկեան Երբրաբ Ամսագրոյ ։

Մի ժողովրդի հետ ծանօթանալու համար ըստկիզբը դիմումենք նորա թէ ընտանեկան և թէ հասարակական սովորութիւններին կամ հանդէսներին. ուրեմն որևիցէ ազգային հանդէս չի մերժեր Խմբագրութիւնդ իւր թերթերի մէջ տպագրել ի լուր ամենեցուն։

Ամսոյս 4ին կատարուեցաւ Եղիսաբէթեան օր. ուսումնարանի կառուցման հանդէսը։ Նոյն օրը առաւօտեան ժամը 10ին ուսումնարանի Պատուելի հոգաբարձուք 15 հատ աղջիկներ աղքատ ընտանիքներից ձրի աշակերտ ընտրելից յետոյ ժողովուեցան նոյն ուսում. դահլիճում աշակերտուհեաց և ուսուցչաց հետ, սպասելով ժամերգութեան ըստկսուելու։ Եկեղեցւոյ զանգակահարութիւնից զկնի բոլոր աշակերտուհիք կարգաւ մի վարժապետի առաջնորդութեամբ հոգաբարձուաց և ուսուցչաց հետ կանոնաւոր ձևով եկան եկեղեցի և կանանց դասի առաջ արանց մէջ զոյգ զոյգ շարուեցան։ Այսպիսի հանդէս առաջին անգամ լինելով այստեղ թէ արանց և թէ կանանց խումբեր դիմում էին եկեղեցի։ Ոմանք դիմումէին այլոց հետևելով, ոմանք միայն այս տեսարանով զուարճանալու և ոմանք ճանաչելով այս գործի վսեմութիւնը իւրեանց մարդկութեան պարտքը վճարելու նպատակաւ։ Աշակերտուհիներից քանի մը զմայլելով այս տեսարանաւ, իւրեանց շրթունքների վերայ արտայայտումէին մանկական քաղցր ժպիտներ. միւսների այտերի վերայ ցոլումէին ամօթխածութեան և պարկեշտութեան նշաններ, և այլք ցնծումէին տեսնելով այս հանդէսը, որ իւրեանց ուսման և դաստիարակութեան համար է։ Ժամերգութիւնից